# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվականի N 171-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 28-ը նոյեմբերի 2024 թվականի թիվ 16 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 28.11.2024թվականի թիվ 16 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. 2025 թվականի համար Արենի համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

3. 2025 թվականի համար Արենի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

4. 2025 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5. 2025 թվականի համար Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6. 2025 թվականի ընթացքում Արենի համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներին վառելիք հատկացնելուն համաձայնություն տալու մասին:

7. Արենի համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի նախագիծը հաստատելու մասին:

8. Արենի համայնքի ավագանու 27.09.2024թ.-ի թիվ 143-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

9. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական և բնակավայրերի նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

10. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

11. Արենի համայնքի ավագանու 25.01.2024թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2024թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացումներ և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

12. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին մանկապարտեզի ծնողական վճարներից զեղչելու և դրամական աջակցություն տրամադրելու մասին:

13. Ամանորին ընդառաջ համայնքում բնակվող բոլոր տնային տնտեսություններին շնորհավորական բացիկներ և նվերներ հատկացնելու մասին:

14. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

15. Արենի համայնքի ղեկավարի գլխավորությամբ ս/թ.-ի դեկտեմբեր ամսին Ֆրանսիայի Հանրապետության Բանդոլ քաղաք գործուղվող պատվիրակությանը գումար հատկացնելու մասին:

16. Արենի համայնքի ավագանու 08.11.2024թվականի թիվ 166-Ա որոշումը անվավեր ճանաչելու, <<Արենի համայնքային զարգացման>> հիմնադրամ ստեղծելու, հիմնադրամի կանոնադրությունը և Արենի համայնքի ղեկավարի 28.11.2024թվականի թիվ 573-Ա որոշումը հաստատելու մասին:

17. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ